

այժմ փոխանակ բանաստեղծութիւն ընելու, հոետորութիւն սկսած եմ ընել հոս: Ընկերաքաղաքական պայքարն է, ուր սկսած եմ փոթորկուիլ: Հիւսկոն անոցած եմ, եւ սկսած եմ Դեմոստինէս կարդալ: Օրհնեցէք զիս Ձեր բարեկամի անուշակ ձեռքերով:

Սիրով՝

Ձերդ

ԴԱՆԻՒԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

* * *

Վարժապետի կեանքը մտոցնել կուտայ քընարը: Վարուժան հարուստ ընտանիքի մը աղջկան հետ կ'ամուսնանար: Բռնի ամուսնութիւն էր այդ, ոչ աղջկան կողմէն, այլ անոր հարուստ ծնողքը բանաստեղծին մէջ անփոխարինելի տաղանդին տեղ կ'ուզէր տեսնել ոտկի, նիւթական գանձ: «Գաւառի Տարեցոյց»ի հեղինակ Սահակ Մեարոյ ինձի կ'ըսէր, թէ Վարուժան իր ընկերներով երբ որոշած ու կարգադրած էր յափշտակել իր սարգայ կիներ, այն ատեն միայն աղջկան ընտանիքը բռնի կը համակերպի այդ ամուսնութեան: Մեր բանաստեղծը չէր ամուսնանար դրամին հետ, այլ աղջկան արտին հետ. ան՝ կնկան մէջ գեղեցիկ սիրտը եւ գեղեցիկ հոգին կը պաշտէր. ասով իր վարժապետի կեանքը չէր քաղցրանար. քընարով չէր կրնար պահել ընտանիք մը: Անոր նիւթական վիճակը խղճալի էր, թէ եւ իր քնարին համբաւը սխալով կը պոռթկար: Բայց դրչով ալիւր շաղուելն անկարելի է:

Երկու տարի վերջը 1912-ին Վարուժան Պոլիս կուգար, ուղղակի ինձի կը դիմէր, կա-

րտով կ'ողջադուրուէինք: Ան տխուր էր, շատ լքուած. իր առաջին խօսքն էր այս.

— Վարդապետս, յոյսս միմիայն ձեր վրայ դրած եկեր եմ հոս, այլեւս գաւառ ջեմ վերադառնար, հոս ինձի այս Ձեր վարժարանին մէջ կամ ուսուցիչ կ'առնէք եւ կամ պոռնապան կ'ընէք:

Մխիթարեցի զինքը, ըսի իրեն, թէ կեդրոնական վարժարանի տեսչի խնդիր մը վրայ: Դաշնակցական մեծերուն հետ նիթէ խօսիմ, թեբեւ բան մը կը կարգադրուի: Ան ըսաւ ինձի, թէ արդէն այդ տեսչութեան պատրաստ են Թուրքն Չարդարեան եւ Շանթ արժանաւոր թեկնածուները:

— Այն ատեն բան մը կը խորհինք. Սուրբ Լուսաւորիչ վարժարանին մէջ պաշտօն մը կ'ուսեննաս. բաւական է որ կաթոլիկութեան խնդիր չհանեն:

Վարուժանը դարմանքով ըսաւ.

— Վարդապետ, չէ՞ք զխտեր, որ ես կաթոլիկ եմ:

Այլ սարահով էի որ Վարուժանի բախտը բացուած էր. ես դիմեցի այդ վարժարանին վարչութեան մեծերուն Արամ էֆ. Երամեանին եւ Գրիգոր էֆ. Ոսկեանին: Խնդիրը շուտով կարգադրուած էր:

Ինչ վերջը՝ Վարուժան Ս. Լուսաւորիչ վարժարանի պէկը ձեռք կ'առնէր. տասնեակ տարիներ առաջ հոս մեր պաշտօնի Փիէր Բիյեատը պաշտօնավարած էր, այն մեծ Փրանսացին, «որ հայութեան ծառայեց քաղաքակրթութիւնը փրկելու համար», ինչպէս կ'ըսէր նոյն ինքն Վարուժան:

